№ 44 Մարտի 13 Կիրակի

1883

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Մարտի 13 Կիրակի № 44

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

# „ՄՇԱԿ"

## ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆԵՐԿԱՅ **1883** ԹՒԻՆ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ

ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷ՝ *Тифлисъ, редакція «Мшакъ»*.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական խնդիր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Բագուից։ Նամակ Նուխուց։ Նամակ Կաղզվանից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

### ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

—

„Մշակի" № 38 մէջ խօսելով „Կաթողիկոսական խնդրի" վրա, մենք վերջացրինք մեր յօդուածը հետևեալ խօսքերով։

„Հետևեալ անգամ կաշխատենք մեր միտքը պարզել թէ, մեր կարծիքով, ինչ անձնաւորութիւն պէտք է լինի ընտրելի կաթողիկոսը, ինչ գաղափարների տէր մարդ պէտք է լինի, ինչ ձևով պէտք է վերաբերվի դէպի ազգային եկեղեցու հաստատութեան հասարակական, կրթական և տնտեսական կողմերը։"

Հասարակական կողմը ասելով,—մենք հասկանում ենք եկեղեցու վարչութեան կազմակերպութիւնը. կրթական կողմը,—դպրոցն է ու քարոզչութիւնը, կրօնական գրականութեան հետ միասին, վերջապէս տնտեսականը,—ազգային-եկեղեցական կալուածների կառավարութիւնն է։

Եւ ահա այսօրվայ յօդուածի մէջ մենք պէտք է խօսենք առաջին կէտի վրա, այսինքն եկեղեցական վարչական կազմակերպութեան վրա։

Երբ տասն և մէկ տարվայ ընթացքում առիթ էր լինում խօսել լուսաւորչական եկեղեցու կազմակերպութեան մասին, մենք երբէք չէինք ուրանում որ լուսաւորչական ազգային եկեղեցու կազմակերպութիւնը մի ժամանակ ժողովրդական էր, բայց դարերի ընթացքում նա իր այդ ժողովրդական ձևը աննկատելի կերպով կորցրել է, այլ և այլ օտար եկեղեցիներից վերցրած նորմուծութիւնների ներգործութեան տակ։ Առաջ հայոց եկեղեցին անպսակ, կուսակրօն հոգևորականներ չունէր, բոլոր հոգևորականները կարող էին և պէտք է պըսակված լինէին։ Քահանայ, եպիսկոպոս, կաթողիկոս ընտրվում էին ժողովրդի կամքով հոգևորական դասակարգի յարգված անձնաւորութիւններից։ Այժմ մենք ունենք անպսակ, կուսակրօն հոգևորականութիւն, որ իր դիրքով, իր բնաւորութեամբ ժողովրդական հոգևորականութեան, քահանաների դասակարգի հակապատկեր է ներկայացնում։ Այժմ ժողովրդական, ընտրողական սկզբունքը պահպանվել է միմիայն կաթողիկոսի ընտրութեան վերաբերութեամբ, իսկ եպիսկոպոս, թեմական առաջնորդ, յաջորդ և քահանայ այլևս չեն ընտրվում ժողովրդից, այլ նշանակվում են հոգևոր բարձր իշխանութեան հրամանով։

Հայոց լուսաւորչական եկեղեցու ոգուն համեմատ քահանան, ժողովրդական ծխական հովիւը, պէտք է ծուխից ընտրվեր,—բայց այժմ նա նշանակվում է հոգևոր իշխանութիւնից։

Եթէ ականջ դնենք հասարակական կարծիքին, կը լսենք ամեն կողմից դանդատներ հայ-լուսաւորչական եկեղեցու սպասաւորների՝ աբեղաների և քահանաների դէմ։ Նրանց մեծ մասը ոգէտ են, նրանց մէջ կան և անբարոյականներ, նիւթապաշտներ, շահասէրներ, նոյն իսկ կաշառակերներ, ասում է ժողովուրդը։ Դանդատներ լսվում են ամեն կողմից, բայց երբ մենք պատասխանում ենք դանդատողներին թէ պէտք է այս կամ այն վերանորոգութիւն անել, որպէս զի այդ տեսակ դանդատների առիթը չը լինի, այն ժամանակ աղաղակներ ենք լսում թէ „չը պէտք է ձեռք տալ մեր եկեղեցու կազմակերպութեանը։"

Ուրեմն ապարդիւն են դանդատներ աբեղաների կամ քահանաների ագիտութեան, շահասէր ոգու, կամ կաշառակերութեան վրա, երբ չենք կամենում փոխել նրանց դրութիւնը։ Ասացէք խնդրեմ, մեղաւո՞ր է արդեօք մի եպիսկոպոս, որ աշխատում է նիւթական կողմնակի աղբիւրներ գտնել իր ապրուստի համար, երբ նա տարեկան 200 ռուբլ ռոճիկ է ստանում Էջմիածնում, մեղաւո՞ր է վարդապետը շահասիրութեան կամ ագահութեան մէջ, երբ նրա տարեկան ռոճիկը ընդամենը 150 ռուբլ է։ Իսկ քահանան, ծխական հովիւը աւելի էլ անտանելի դրութեան մէջ է. նա ոչինչ ռոճիկ չէ ստանում, այլ նրա նիւթական դրութիւնը կախված է ծխական ժողովրդի կամայականութենից, նրա ողորմութենից։ Քահանան մուրացկան է։ Եւ զարմանում են, որ հոգևորականութիւնը տգէտ է։ Բայց, ասացէք խնդրեմ, ո՞ր ուսում առած մարդ, ո՞ր բարձր ուսում ստացած երիտասարդ կերթայ աբեղայ, կամ մանաւանդ քահանայ կը դառնայ, երբ նրան վիճակված է ամբողջ կեանքը, բացի կենսական ամեն տեսակ դժուարութիւններ և զրկանքներ կրելուց, լինել իր ամբողջ կեանքը մուրացկան։

Երբ մեր բարձր ուսում ստացածների մի խումբ հրաւիրվեցաւ Էջմիածնի ճեմարանը պրոֆէսորների պաշտօնները ընդունելու, նրանք բոլորն էլ հաղարներ պահանջեցին իրանց պաշտօնները վարելու համար, ասելով որ հեռու քաղաքակիրթ աշխարհից, մայրաքաղաքի կեանքից, նրանք զրկվում են կեանքի ամեն վայելչութենից, ուրեմն այդ անձնազոհութեան համար, գոնէ պէտք է վարձատրված լինեն մեծ ռոճիկներով։ Թո՛ղ նոյն անձնաւորութիւնները փորձէին աբեղայ դառնալ տարեկան 150 ռուբլով, կամ քահանայ դառնալով մուրացկանութեամբ ապրեն։ Ի հարկէ, նրանք այդ բանին չեն համաձայնվի, բայց անդադար կը գանգատվեն, որ մեր հոգևորականութիւնը ոգէտ է։ Իսկ երբ նրանց կասես. „վերանորոգեցէք հոգևորական դասակարգի կազմակերպութիւնը,"—նրանք կը պատասխանեն թէ յանցանք է ձեռք տալ լուսաւորչական եկեղեցու դարևոր կազմակերպութեան ամբողջութեանը։

Ուրեմն հետևանքն ի՞նչ է։ Թող կազմակերպութիւնը նոյնը մնայ, երբէք չը վերանորոգվի և միշտ առիթ լինի գանգատվելու, որովհետև եկեղեցու այդ տեսակ կազմակերպութեան ժամանակ ուսում առած, կրթված մարդիկ երբէք չեն վստահանայ դառնալ վարդապետ, մանաւանդ դառնալ քահանայ։

Ահա այն նշանաւոր, կենսական հարցերից մի քանիսներ, որոնք կարող էին յարուցվել վիճաբանվել և լուծվել ընդհանուր եկեղեցական ժողովի մէջ, կաթողիկոսի նախագահութեամբ։

Ուրեմն որքան անհրաժեշտ է որ ընտրելի կաթողիկոսը լինի մի մարդասէր, խելացի, հաստատ ուսում, ժամանակակից կըրթութիւն ստացած մի անձնաւորութիւն։

Հետևեալ անգամ կը շարունակենք մեր խօսքը եկեղեցու վարչական կազմակերպութեան վրա և նրա յարաբերութեան վրա դէպի ազգի կրթական գործը։

Մենք կրկնում ենք, որ ներկայ յօդուածների շարքը տպելով մեր նպատակն է առաջարկել այն պրոգրամը, որի հիման վրա, մեր կարծիքով, կարող է գործել ընտրելի կաթողիկոսը։ Իսկ այդ տեսակ պրոգրամ իրագործել, պարզ է, որ կարող է միմիայն մի ճշմարիտ լուսաւորված անձնաւորութիւն, որ աստ կը լինի որ և է կանխակալ նեղ գաղափարներից։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Փետրվարի 28-ին

Եկել, բարեկենդանի վերջին օրը, կռիւ ծագեց թուրքերի և ռուսների մէջ։ Այդ կռիւը մասամբ կարելի է հետևանք համարել այն գաղտնի սպանութիւնների, որ կատարվում էին վերջին ժամանակը թուրքերի ձեռքով և մասամբ էլ այն հարբած դրութեանը, որի մէջ գտնվում է ռուս մուժիկը բարեկենդանի օրերում։ Ինչից ծագեց կռիւը, չենք կարող ասել. հարբած մարդը ինքն էլ չը գիտէ ինչու համար է կռւում։ Ցերեկվայ ժամը երեքից սկսվեց կռիւը բազարում։ Պոլիցիան չը կարողացաւ նրան դադարեցնել, քանի որ նրա ծառայողները մեծ մասամբ թուրքեր են, որոնք յայտնվելուց ամբոխը էլ աւելի դրդվում էր։ Միայն այն ժամանակ սկսեց ցրվել ամբոխը, երբ յայտնվեցաւ նահանգապետը մի խումբ ռուս զինուորների հետ։ Կատաղած ժողովուրդը փախչելով բազարից, սկսեց կողոպտել թաղերում գտնված թուրքաց խանութները։ Ականատես եմ եղած մի թուրքի խանութի կողոպտվելուն։ Մի քանի անդամ քարով դրանը խփելուց յետոյ, դուռը կոտրում են և խանութի մէջի ապրանքը ցրիւ են տալիս փողոցում, կոտրում են, փշրում են և վերջապէս ոչնչացնում են բոլորը։ Խեղճ խանութի տէրը լսում է այդ սոսկալի համբաւը, մոռանալով երկիւղը և ամեն ինչ, վազում է տեսնելու իր փոշիացած դուքանը։ Բայց ինչ, թուրքերը ըռնում են իրան էլ։ Հազիւ կարողանում է նա հազար մի աղաչանքներով և չատ ծեծվելով դուրս պրծնել ժողովրդի ձեռից։ Խանութներ կողոպտելը տևեց մինչև գիշերվայ ժամը երեքը։ Ընթերցողը կը մտաբերի որ այդպիսի կռիւներ պատահեցան նոյնպէս 1881 թւի Զատկի օրերում։

Պ. Թ.

### ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Փետրվարի 28-ին

Երեկվայ սկսած անկարգութիւնները մինչև այժմ դեռ շարունակվում են։ Այսօր առաւօտեան մի փոքր խաղաղ էր և բոլոր խանութները բաց էին, բայց կէսօրվայ դէմ հետզհետէ ռուսները սկսեցին քաղաքի ներքևի կողմից հաւաքվել գլխաւոր հրապարակը, ուր եկան նոյնպէս տեղային զօրքերը։ Այստեղից փոքր առ փոքր դիմեցին դէպի շուկան. զինուորներին հրամայված էր հրացանների ետքով խփել ամենին, որոնք անկարգութիւն էին ուզում անել, բայց այդ բոլորը չէր օգնում և ռուս բանուորները, որոնց հետ դժբաղդաբար խառն են և հայերը, ամենայն կողմից աշխատում էին յարձակվել դէպի թուրքերի փողոցները։ Թուրքերը պէտք է խոստովանած, որ բոլորովին ցանկութիւն էլ չունեն կռւելու, բայց այսու ամենայնիւ ստիպված են պաշտպանվելու։ Իսկապէս դիմացի կռիւ չը կայ թուրքերի հետ, որովհետև վերջինները, ինչպէս ասացի, ցանկութիւն չունեն կռւելու և հեռացած, քաշված են իրանց փողոցները։ Միայն մի քանի անդամ նրանք ևս յարձակվեցին, երբ ռուսները կամենում էին միանդամայն նրանց տների վրա արշաւել։ Թուրքերը թէև բոլորը զինուորված են, բայց զէնք չեն գործածում և կռւում են քարեր արձակելով և փայտերով, մի երկու անդամ ատրճանակներից նոյնպէս արձակեցին, բայց անվնաս, լոկ ռուսներին վախեցնելու նպատակով։ Ռուսները զէնք չունեն, բայց կռւում են քարերով և ձեռքով. վայ էն թուրքին, որ առանձնապէս ընկնում է սրանց ձեռքը։ Մի ժամ սրանից առաջ կռւող թուրքերից մէկը փախչելու ժամանակ չը գիտեմ ինչպէս ընկաւ ռուսների ձեռքը և անխնայ կերպով թակվելուց յետոյ ընկաւ գետինը. ռուսները կարծեցին որ նա մեռաւ։

Առ այժմ յայտնի չէ թէ որքան մարդիկ են սպանված և որքան վիրաւորված, բայց առաջինների թիւը երևի աննշան է, իսկ վերջինները չատ են թէ թուրքերից և թէ ռուսներից։ Մի հայ ծառայ ևս այս գիշեր վիրաւորվել է մի թուրքի ձեռքից ատրճանակը խլելու ժամանակ։ Օրը մթնել է և ամբողջ քաղաքը զարձեալ սար-

սափի մէջ է մտել, մանաւանդ վախում են հայերը, որովհետև սրանք դիմաւորապէս բնակվում են Թուրքերի տներում: Երկիւղ կայ, որ Թուրքերը զիշերով յարձակվեն քրիստոնեաների բնակարանների վրա, ըստ որում նրանք սաստիկ գրգռված են այս ժամիս, մանաւանդ հայերի վրա: Թուրքերը կուզի բոլոր պատճառները հայերին են դնում և սպառնում վրէժը հանել վերջիններից: Տեսնենք ինչպէս կանցնի այս զիշեր, վաղը և դուցէ ամբողջ շաբաթը: Քաղաքում զինուորները պահպանում են բոլոր Թուրքերի փողոցները և հայերը վաղօրօք քաշվել են իրանց բնակարանները: Թէ ինչպէս է սկսվել այս կռիւը ես երէկ երեկոյեան ձեզ հաղորդել եմ, բայց այսօր ես մի փոքր գործին խորը Թափանցելով գտայ աւելի հիմնաւոր պատճառներ, որոնց մասին միաբերան վկայութիւն էին տալիս բոլոր մուժիկները, որոնց ես հարցնում էի: Բանից դուրս է գալիս, որ շատերը վաղօրօք են մտածել այս ապստամբութեան մասին:

Շիրվանզադէ

## ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Մարտի 5-ին:

Այստեղ առևտուրը բոլորովին անխախտելի դրութեան մէջ է: Վաճառականների վիճակը օրից օր մօտենում է յուսահատական ճգնաժամին. արհեստաւոր դասի կացութիւնն անտանելի է. կենսական ամենահարկաւոր մթերքների զինն անընկատելի կերպով կրկնապատկվում է: Ամեն տեղ պատած է մի տիսուր լռութիւն. ամենուրեք թագաւորում է անշարժութիւն—ամբողջ քաղաքը ենթարկված է մի ընդհանուր մեռելային անգործունէութեան: Հասարակական հարց, առաջադիմութեան խնդիր—այդ բոլորը՝ բոլորն էլ թաղված են հասարակութեան անհամերաշխութեան և խորին անհոգութեան մէջ:

Եթէ անտարբերութիւնն ունի աստիճաններ, դրա ամենաբարձր աստիճանը պատկանում է միմիայն նուխեցուն: Նա անտարբեր է դէպի ինքը, անտարբեր է և դէպի ուրիշները: Չէ ուրախանում կեանքի յաջող երևոյթներով, չէ հեռաքրքրվում և ընդհանուր հարցերով: Ինչպէս որ անձեռնհաս է նա քաջալերել այս կամ այն մխիթարական երևոյթը, այնպէս էլ չէ վրդովվում և ամենօրեայ զեղծումների դէմ: Ի՞նչպէս կարելի է քննել այս ինչ, կամ այն ինչ իշխանի, պարոնի, աղայի, հայր-սուրբի, քահանայի, գանձապահի, հոգաբարձուի և այլն-ի հասարակական գործերը, «նրա քէփին կը դիպչի», կամ թէ՝ «դու խօ չՀՕ կարող աշխարհք զղացնել»: Ահա միայն, միայն այս սկզբունքի ջերմ պաշտպանն է նուխեցին, և նա իր բոլոր գործերի մէջ առաջնորդվում է այդ օրէնքով—ինքն իրան օրօրում է՝ ինքն իրան քընացնելու համար: Եւ այդ պատճառով ընդհանուր չարիքները, զեղծումները օր օրի վրա աճում, բազմանում են: Գաղափար կազմելու համար թէ՝ մի ժողովուրդ ո՞ր աստիճանի յետ ընկած վիճակի մէջ է, բաւական է աչքի առաջ ունենալ և այն հզօր փաստը միայն, որ նա միշտ ամենաստոյն անտարբերութեամբ է վերաբերվում դէպի ամենօրեայ զեղծումները: Նուխին ազատ չէ այդ թերշուառութիւններից:

Թող «Մշակը՝» ընկերական ոգու գաղափարներով տոգորված, զէլ-զէլ քարոզէ հիմնել «փոխատու և խնայող ընկերութիւններ, ընդհանուր մարդասիրական հիմնարկութիւններ, փոխադարձ օգնութեան բանկեր, չտեմարաններ». այդ բոլորը հակառակ են մեր սկզբունքներին—դրանց մի մասն անհասկանալի է մեզ, միւս մասն՝ անտանելի, իսկ երրորդը՝ դատապարտելի: Մենք աւելի հակամիտ ենք և համամիտ՝ կազմել մի «փոխադարձ հարատահարիչ ընկերութիւն» անորոշ պայմաններով, մի քանի միջնակարգ «յետադիմութեան մըրցարաններ» և մի հատ բարձրագոյն «բամբասանոց»: Բայց թէ՝ հասարակութիւնը քաղցած է, թէ խեղճ արհեստաւորը՝ 40—45 տոկոս տալով անգութ հարստականին՝ մնքում է իր ծանր բեռի տակ, թէ մեր ուսումնարանը՝ նուխեական անապահովութեան պատճառով, մերձ ի մահ հիւանդ է, թէ մեր գիւղացի եղբայրները զուրկ մնալով կեանքի անհրաժեշտ մտաւոր և բարոյական պաշարից՝ այդ բոլորից և ոչ մէկը չունի ընդունարան մեր մտածութեանց առարկաների շարքում: Եւ մեր այսպիսի վարմունքով՝ արդարացնում ենք հասարակաց այն դատապարտելի առածը, թէ, «եղբօրս սրտին մի հրայանի գնտակ դիպաւ, ինձ համար մի և նոյն էր թէ՝ նա դարմանի ջվալին դիպչելիս լինէր»:

Մ. Ա.

## ՆԱՄԱԿ ԿԱՂԶՎԱՆԻՑ

—

Փետրվարի 19-ին

Կաղզուան քաղաքի 400 տուն բնակիչները այսօր զուրկ են իրենց մի կանոնաւոր ծխական դպրոցից: Եթէ կաղզուանցուն առաջարկում ես որ և իցէ մի բան նուիրել իր որդու կրթութեան համար, «զուրբան քեզի, տարին քեսասդ եկաւ, ես էս տարի ոչինչ չեմ կարա տալ» կասէ քեզ. իսկ միւս օրը տեսնում ես, որ մի և նոյն մարդը մեկիտանի խանութի մէջ, իր մի քանի ընկերների հետ նստած, երկար ու բարակ, աննիթ խօսակցութեան պոչը բռնած կռնծում է և օրական մի ռուբլու չափ ծախսեր է անում: Երբ այս աշունքին երկու ուսուցիչներն էլ կանոնաւոր կերպով շարունակում էին դասաւուութիւնը և նորանցից ոչ ոք էլ քանի ամսուայ ընթացքում ռոճիկ չէր ստացել, կաղզվանցիք չէին էլ մտածում, նորանց վիճակը թեթեացնելու. իսկ խեղճ ուսուցիչները չը կարողացան երկար համբերել, և նրանցից մէկը ստիպված թողեց իր պաշտօնը, գնաց ուրիշ տեղ դասաւուութեամբ պարապելու: Մնաց միւսը՝ որը միայն ձայնագրութեան համար էր հրաւիրված:—Սա էլ բացի ձայնագրութիւնը՝ ուրիշ առարկաներ չը գիտէ: Եւ ինչով է մեղաւոր նա, քանի որ հրաւիրված է միայն ձայնագրութեան պաշտօնի և ոչ ուրիշ առարկաների համար: Երևակայեցէք մի զարոց, որի մէջ հաւաքված են 40-ի չափ աշակերտներ և առաւօտից մինչև երեկոյ, բացի ձայնագրութիւնը, ուրիշ ոչինչ չեն սովորում: Մի անգամ ինձ պատահեց տեսնել ուսումնարանի մէջ մի միջահասակ, լայն թիկունքներով տիրացու, որը, լայն քանոնը բռնած ձեռքին, ստիպում էր մի առոյգ մանուկի հետևեալ խօսքերով. «սա՛, ասում եմ, սա՛, ծօ». իսկ փոքրիկ երեխան չը գիտէր ինչ պատասխանել և զս


կերպով հեկեկում էր:

Մի հարցնող լինի թէ՝ «պ. տիրացու! ինչ ես սովորցրել այդ խեղճ մանուկին և ինչ ես պահանջում նրանից...» Երեք ամսվայ չափ ուսումնարանը այս վիճակի մէջ մնալուց յետոյ, վերջապէս, դեկտեմբեր ամսում եկաւ այստեղ Կարսի առաջնորդ գեր. Աղուանեանցը, որը հրամայեց հոգաբարձուներին՝ որ հին ուսուցչի վարձը եկեղեցու գումարից վճարեն: Այժմ հասարակութիւնը մեղանչելով իր պարտականութեան դէմ, խնդրեց գեր. Աղուանեանցից, որ մի ուրիշ ուսուցիչ վարձէ և ուղարկէ, բայց մի քանի օրից յետ պատասխան եկաւ որ նոր ուսուցիչ չէ գտել: Հոգաբարձուները մեղադրում են ուսուցչին, իբրև թէ նա դրամի սղութեան պատճառով չը համբերեց մի քանի միջոց մինչև որ գումար գտնէին: Բայց դրան ես կը պատասխանեմ, որ հին ուսուցիչը մեղաւոր չէր, նա ինչով պիտի ապրէր՝ երբ աշունքը հիւանդացած և պառկած անկողնի մէջ՝ ոչ հացի փող ունէր և ոչ բժշկվելու համար մէկ կոպէկ, որ տար իրեն բժշկող բժշկին:

Ի վերջոյ ես կասեմ, կաղզվանցիք մի այնպիսի հասարակութիւն են, որոնք կեր ու խում, քէֆի ու արբեցութեան համար պատրաստ են զոհելու իրանց ունեցած-չունեցածը, իրանց ընտանիքին տանը սոված թողնելու, բայց իրանց զրկների կրթութեան համար մի կոպէկ տալու,—ոչ:

Ահա մի հասարակութիւն, որի մէջ տիրապետում են դարեւոր նախապաշարմունքները ծուլութիւնը, անհոգութիւնը, անտարբերութիւն և աշխարա կեղծաւորութիւնը, որը մի տեսակ քաղաքավարութիւն է համարվում իրենց մէջ:

Հինգ տարվայ չափ ազատվելով Օսմանեան ծանր լծի տակից փոխանակ սթափվելու խորտգիտութեան քնից, նրանք այժմ գիշեր ցերեկ զմայլվում են զուռնայի ձայնից և ուրախութեան մէջ են անցնում իրանց ժամանակը:

Վերջապէս, եթէ կայ աշխարհիս մէջ մի յետ ընկած քաղաք կամ գիւղ, նոցանից մէկն էլ կաղզվանն է, իր անբարոյականութեամբ բնակիչների ծուլութեամբ, անհոգութեամբ:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից բժիշկ Իթիւճեան ուղարկել է մեզ մի քանի իր հրատարակած բժշկական կամ առողջապահական ժողովրդական գրքոյկներ հայերէն լեզուով, որոնք կրում են ընդհանուր վերնագիր «Մատենադարան ժողովրդեան»: Գրքոյկներից մին խօսում է «Պատուաստի և նրա օգտակարութեան» վրա, միւսը կրում է հետևեալ վերնագիրը, «Ակռայք և զանոնք առողջ պահելու միջոցներն» և այլն: Հրատարակութիւնը շատ էժան է և անշուշտ մեծ օգուտ կարող է տալ, տարածելով ժողովրդի մէջ առողջապահական գաղափարներ: Տարեկան 6 գրքոյկներ պիտի հրատարակվեն և Ռուսաստանում այդ հրատարակութեանը գրվել ցանկացողը պէտք է վճարի 1 ռուբլ 20 կոպէկ, փոստի ծախսի հետ միասին: Դիմել կարելի է Կ. Պոլիս, պ. դոկտոր Իթիւճեանին հետևեալ հասցէով: «Constantinople, Péra, Tarla-Bachie, Rue Zambac № 12, M. le Docteur M. P. Utudjian.»

—

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են որ այն պսակը, որ քաղաքի հայոց հասարակութիւնը ընծայել է դերասան Աղամեանին, արժէ 400 ռուբլ, որ հանգանակութեամբ է ժողովված: Այդ պսակը նրան ընծայեցին «Համլէտի» ներկայացումից յետոյ:

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են: «Մեր ուսումնարանը կատարեց Վարդանանց տօնի օրը սովորական հանդէսը: Եկեղեցական արարողութիւններից յետոյ զարոցի աշակերտները շատ ներդաշնակ կերպով երգեցին:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Փետրվարի 27-ին Բագուի քաղաքային այգուց մի ֆրանսիացի պէտք է երրորդ անգամ օդապարիկով թռչէր: Հասարակութիւնը հաւաքված էր այգիում, տեսնելու համար ինչպէս օդապարիկը մի թնդանօթ իր ետևից քաշելով, այդ թնդանօթը պէտք է օդում կրակէր: Ֆրանսիացու օդագնացութեան փորձը երկու նախընթաց կիրակի օրերն էլ չաջողվեցաւ: Նա աւանակի վրա նստած պէտք է թռչէր, բայց յանկարծ թռչելու ժամանակ, օդապարիկը դիպաւ բ ա տ օ ն դ ի պատին, ինքն ֆրանսիացին վայր ընկաւ, իսկ խեղճ էշը ահաբեկված թռաւ, բայց շուտով վայր ընկաւ բաւական բարձրանալուց յետոյ: Փետրվարի 27-ին դարձեալ օդագնացութիւնը չաջողվեցաւ ֆրանսիացուն: Հասարակութիւնը ցրվեց հրապարակական պարտէզից, դժգոհութիւն յայտնելով որ իւրաքանչիւր հանդիսականի վճարած 20 կոպէկ մուտքի փողը զուր կորաւ:»

—

Մեզ ուղարկել են հետևեալ նամակը տպելու համար: «Մի անբացատրելի անցք պատահեց մեր Ծղնէթ գիւղում: Մեր քահանայ Սարգիս Երիցեանց, որի ջանքերին մեր գիւղը պարտական է որ ունի մի ծխական ուսումնարան, ահա փետրվարի 27-ին, բարեկենդանի վերջին օրը, մի բաժակ գինի խմելուց յետոյ, զգաց թէ թունաւորված է անյայտ չարագործների կամ թշնամիների ձեռքով: Թունաւորութեան նշանները այն աստիճան սաստիկ էին, որ տէր հօր ընտանիքը արդէն յոյս չունէր որ քահանան կապրի: Միայն զանազան ազնայնի միջոցների շնորհով, մանաւանդ կաթ և մածուն ընդունել տալով հիւանդին, կարողացան փրկել նրա կեանքը: Տէր հայրը այնու ամենայնիւ չորս օր շարունակ հիւանդ էր թունաւորութեան հետևանքից, բայց այժմ կատարելապէս առողջացաւ: Եթէ այդ սպանութեան փորձը արել են Սարգիս քահանայի անձնական թշնամիները, մենք յոյս ունենք որ տէր-հայրը կատարելապէս կազդուրվելուց յետոյ դարձեալ չի վհատվի և աւելի տոկունութեամբ և եռանդուն ոգով կաշխատի պահպանելու ուսումնարանի դրութիւնը:»

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից դպրոցի դրութեան վրա նշանակված քննութեան հետևանքներից մինն այն էր, որ երէկ այդ դպրոցի ուսուցիչներից մինը արդէն արձակվեցաւ իր պաշտօնից:

—

Ցիշեցնում ենք ԹԻՖԼԻՍԻ հասարակութեանը որ այսօր, կիրակի օր, մարտի 13-ին, առաւօտեան ժամը 12-ին, դոկտոր Արասխանեանց կարդալու է իր հինգերորդ դասախօսութիւնը Արծրունու թատրոնում:

—

Ինչպէս հեռագիրը մեզ արդէն հաղորդել է, մարտի 1-ից «Միջազգային հեռագրական» գործակալութիւնը դադարեցրեց իր գործունէութիւնը և այդ գործակալութեան տէրը «Գոլոս» լրագրի նախկին խմբագիր Կրաևսկի, ծախեց իր գործակալութիւնը «Հիւսիսային հեռագրական» գործակալութեանը, որ առաջինի տեղ յանձն առաւ պարտաւորութիւնը հաղորդել լրագիրներին հեռագիրներ:

—

«Новости» լրագրում կարդում ենք որ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ հիմնվում է մի ընկերութիւն Մոսկվայի համալսարանի նախկին ուսանողների, այն նպատակով որ միջոց տայ այդ համալսարանում աւարտած չքաւոր ուսանողներին նիւթական ժանդակութիւն ստանալ և որ և է պարապմունք գտնել:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Աւետիք Տէր-Յակովբեանցից նրա հրատարակված նոր գրքոյկը «Պալեստին» վերնագրով: Դա պատկերազարդ աշխարհագրական ձեռնարկ է: Տպված է Թիֆլիսում Յովհ. Մարտիրոսեանի տպարանում և ներկայ 1883 թվին: Գրքոյկի գինը 20 կոպէկ է:

—

Պ. Աւետիք Տէր-Յակովբեան խնդրում է մեզ տպել հետևեալը: «Որովհետև մտադիր եմ մի քանի օրից յետոյ ուղևորվել արտասահման, այդ պատճառով խնդրում եմ առ այժմ ինձ նամակ գրելիս այս հասցէով դիմել. Тифлисъ, Сололаки, Гановская улица, портному А. Теръ-Акопу, յանձնել Աւետիք Տէր-Յակովբեանցին:»

—

ԶԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ մեզ գրում են հետևեալը: «Նոր տարի բացի Զալալ-Օղլու ուսումնարանից, Գանձասար, Գիվաքարակ, Դսեղ, Օձուն և Սանահին գիւղերում գտնված հայոց ծխական ուսումնարաններից ոչ մէկը չէ ստանում որ և է հայ խրատագրութիւնից թերթը ձրիաբար: Այս էլ երևում է Լօռու բաղդն է:» Զարմանալի մարդիկ են հայերը. նրանք կարծում են որ հայ խմբագրին լրագիր հրատարակելը ոչինչ չէ նստում: Հազար անգամ ասել և կրկնել ենք, որ «Մշակի» պէս ամենօրեայ թերթ հրատարակելը նստում է խմբագրութեանը տարեկան 12 հազար ռուբլ: Ինչ կլինի մեր դրութիւնը, ուր կերթայ բանը, եթէ մենք մեր լրագիրը ամենքին ձրի ուղարկենք: Մի՞թէ խրաքանչիւր հայոց գպրոցը, կամ գտնէ այդ գպրոցներից ամենաուսնորները չեն կարող տարեկան մի 10 ռուբլ ծախսել մի հայոց լրագիր ընտանալու համար: Հայի համար ամեն տեսակ ծախս անհրաժեշտութիւն կարող է հանդիսանալ, բայց փող ծախսել ընթերցանութեան համար, մտաւոր սնունդ ընդունելու համար,—դա անհրաժեշտութիւն չէ: Դա շռայլութիւն է և կարելի է այդ շռայլութիւնն ընդունել երբ նրան քեզ ընծայում են: Ահա հայի դատողութիւնը, նրա բարոյականութիւնը. և այդ տեսակ ժողովուրդ ուզում է առաջադէմ ժողովուրդ համարվել:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Տրապիզոն, 5 մարտի 83

Ինչպէս ամեն տգէտ ազգեր, նոյնպէս և հայերը մեծ յարմարութիւն ունեն կոյր կերպով ընդօրինակելու զանազան ձևեր և գործողութիւններ՝ որոնք իւրանց շուրջը կը կատարուին: Հայոց պատմական և ներկայ կեանքը փոքր ինչ խոհեմաբարոյ մարդը ինձ հետ կարող է ասել թէ հայ ազգը ցեղական մասնաւոր յատկութեամբ մը ուրիշ ազգերէ աւելի հակում ունի դէպի ձևականութիւնը (formalité), դէպի օտար երևոյթները, յայտնի բան է այս յատկութիւնը կեանքի հանգամանքներէն յառաջ է եկեր: Հայ ազգը դեռ Եւրոպայի լուսաւորութեան հաղորդ չեղած արևելեան բոլոր ազգերէն առաջ և ճարտար կերպով ընդօրինակեց նոցա հանդերձը և արտաքին ձևերը: Գաւառական քաղաքներու մէջ ես տեսած եմ աշխարհը չը ճանաչող հայ կիներ եւրոպական տարազով: Աշխարհիս չորս կողմը սփռուած հայ գաղթականութիւններէն և ոչ մին գտնէ փոքր մասամբ պահած է իւր հանդերձը և կամ իւր կենցաղավարութեան ձևերը: Ամեն գաղթականութիւն տեղական զօրեղ ազդեցութեան տակ կընկնի և կայլայլի, բայց նշանաւոր ժամանակի մը մէջ, և այդ ժամանակը համեմատութեամբ մը կերկարի կամ կը կարճնայ, նայելով ժողովրդեան դէպի օտար ձևերը ունեցած հակումին. հայոց համար այդ ժամանակամիջոցը խիստ կարճ է, ուրեմն դէպի ձևի մը ընդօրինակութիւնը ունեցած հակումնին շատ զօրեղ է:

Ահա այդ յատկութեան շնորհիւ անցեալ օրեր Տրապիզոնի գաւառական ուսումնական խորհուրդը գիւղական ուսուցիչներէն մէկ ժողով կազմեց՝ որ-

պէս զի բոլոր գիւղերուն համար մէկ ընդհանուր ծրագիր կազմեն, և որովհետև խնդիրը գիւղացոց կը վերաբերէր քաղաքի ուսուցիչները հրաւիրուած չէին։ Թիֆլիսի մէջ ուսուցչական ժողովը կազմուեցաւ, նոյն օրերը Կ. Պոլսոյ մէջ մի այդպիսի փորձ եղաւ, մէկ երկու ամիս վերջը Վանայ մէջ սկսան և ահա հիմայ Տրապիզոնի մէջ կազմեցին և ով գիտէ մի քանի օրէն ուրիշ տեղ մը ևս չը պիտի սկսեն։

Այստեղ մի հարց կը զարթի. այդ բոլոր ուսուցչական ժողովները և տաճկա-հայոց բազմաթիւ ուսումնական խորհուրդները և Կ. Պոլսոյ այժմեան ուսումնական խորհուրդը (որ ընդհանրապէս տիրացու վարժապետներէ կազմուած է) ինչ կընեն. բոլորն ալ ծրագիրներ կը պատրաստեն, այսինքն իզուր ժամանակներ կը վատնեն։ Միլիոնաւոր ծրագիրներ չինուած է մինչև այսօր հայոց ազգին մէջ, բայց և ոչ մին գործադրուած է։ Այսօր ծրագիր մը հանեց Պոլսոյ ուսումնական խորհուրդը չրջաբերականի ձևով՝ որ հարիւրաւոր հարցեր կը պարունակէ, որոնց պէտք է պատասխանեն գաւառացի վարժապետները։ Այդ բոլորովին անգործադրելի պիտի մնայ անկարողութեան պատճառաւ, զի այդ չրջաբերականը զրողը անդամ՝ որ պ. Մինաս Չերազը լինել կերևայ լեզուին ձևէն, կատարեալ բաւարար պատասխան չը կրնար տալ։ Ուրեմն պարզ կերևայ թէ այն անիրականալի գործերուն ինչու ձեռնամուխ կըլլան, յայտնի բան է ձևականութիւն։ Պոլսոյ լրագիրներուն մէջ հրատարակուեցաւ այդ չրջաբերականը՝ բայց բաւական երկայն լինելուն չեմ ուզեր այստեղ մէջ բերել, միայն սաչափ կըսեմ որ ժողովրդեան կեանքը իմաստասիրելու մէջ հրամայ ծրագիր է։ Ա՛խ, ԵՐԲ պիտի ազատինք ծրագիրներ կազմելէ և գործի սկսինք։

* * *

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Gazetta d'Italia» հաղորդում է իր թղթակցի խօսակցութիւնը Կանի մէջ Գլադստոնի հետ, որ մաքուր ազատական բարբառով էր խօսում։ Մի քանի խօսքերից յետոյ Գլադստոն անցաւ քաղաքականութեանը և յայտնեց, որ աստուածաբանական բաժինների ոչնչացնելը իտալական համալսարանների մէջ ցաւակցութեան արժանի մի երևոյթ է, որովհետև նրա համոզմունքով իսկական և հաստատ առաջադիմութիւն կարող է լինել այն ժողովրդի մէջ, որ կրօնական հաստատ համոզմունքներ ունի։ Այնուհետև Գլադստոն անցաւ Իտալիայի գաղթականական քաղաքականութեան, որ նա պախարակում էր։ Գաղթականները, ասաց Գլադստոն, երբէք չեն կարող հարստացնել կենտրօնական երկիրը։ ԵԹԷ Իտալիան նիւթական բարօրութիւն է ցանկանում, նա պէտք է իր տանը աշխատի։ Գաղթականները մանաւանդ սկզբից մեծ ծախսեր են պատճառում կենտրօնական երկրին, նրա հզօրութեանը ոչինչ օգուտ չը բերելով։ Վերջը Գլադստոն անցաւ Իտալիայի յարաբերութիւններին Վատիկանի հետ և կարծիք յայտնեց յօգուտ modus vivendi վերականգնելու իտալական և պապական կառավարութիւնների մէջ, որը, չը ոչնչացնելով առաջինի իրաւունքները, այնու ամենայնիւ կը հաշտեցնէր ժողովրդին ազգային եկեղեցու հետ։ Ազատամիտ լրագրի թղթակիցը սաստիկ զարմացած էր, լսելով անգլիական ազատամիտների առաջնորդից այդ կարծիքը, որ բոլորովին հակառակ է իտալական ազատամիտների հայեցքներին։

—«Daily News» լրագրի թղթակիցը հաղորդում է հետևեալ մանրամասնութիւնները Կրապօտկինի կալանաւորման մասին Լիոնի բանտի մէջ. «Մարտի 5-ին իմ ստացած նամակի մէջ Կրապօտկին ինձ հաղորդում է, որ թէպէտ նա թարմ օդի և շարժողութեան պակասութեան պատճառով իրան թոյլ և անառողջ է զգում, բայց և այնպէս նա այժմ իրան աւելի լաւ է զգում, այնպէս որ նա օրական երկու երեք ժամ աշխատում է։ Յայտնի աշխարհագիր Ռէկլիւ հրաւիրեց նրան աշխատակցել «Geographie Universelle» իր նոր հեղինակութեանը, բայց այդ աշխատանքի համար Կրապօտկին Փարիզի մէջ պէտք է լինի, որ կարողանայ հաւաքել անհրաժեշտ նիւթերը։ Մինչև այժմ ի զուր էին բոլոր միջնորդութիւնները Կրապօտկինին Փարիզի բանտերից մէկը տեղափոխելու մասին։ Իշխանութիւնը անուղղակի մերժում է այդ խնդիրը։ Հաւանական է, որ Կրապօտկին միւս անիշխանականների հետ կը տարվի սուրբ Մարգարիտայի կղզին, որ Նիցցայի հանդէպ է գտնվում»։

—Մարտի կէսից Փարիզի մէջ կը սկսվի հրատարակվել քաղաքական մի նոր թերթ «L'Etendard» վերնագրով։ Հրատարակված պրօգրամից երևում է, որ լրագիրը պէտք է լատինական ժողովուրդների օրգան լինի։ Պրօգրամի մէջ ի միջի այլոց ասված է. «Հարցը լատինական աշխարհի բոլոր շահերի միութեան մասին է սլավեան աշխարհի օգնութեամբ գերմանականութեան դէմ։ Մեր երկիրը այժմ դէմ առ դէմ է մի նոր հարցի. լինել թէ չը լինել։ Այդ հարցը միատեսակ հետաքրքրում է լատինական բոլոր ժողովուրդներին։ Բացի այդ նա հետաքրքիր է Շվեցիայի, Դանիայի, Բելգիայի, Հօլանդիայի և Ռուսաստանի համար։ ԵԹԷ մենք կը պաշտպանենք Ֆրանսիական շահերը, մենք կարող ենք յուսալ եւրօպական պետութիւնների մեծամասնութեան օգնութեան վրա։ Թող չը զարմանան, որ մենք ներկայ հրատարակութիւնը սկսում ենք համեմատաբար աննշան դումարով։ Մեր խմբագրութիւնը կաշխատի գրեթէ առանց վարձատրութեան, իսկ մեր թղթակիցների և աշխատակիցների մեծամասնութիւնը ոչինչ վարձ չին պահանջում։ Նրանք բոլորն էլ երջանիկ են, որ կարող են մասնակցել այդպիսի ազգասիրական գործին»։ Խմբագրութեան խորհրդի անդամներ են՝ կոմս Դինդէյ Բրօխօցկի, մարկիզ Տուզուտի իտալական թագաւորի նախկին ադիւտանտը, Էմիլիօ Կաստելար, սպանիական հանրապետութեան նախկին նախագահը, գեներալ Տիւր, ազգասիրական միութեան փոխ-նախագահ և Ֆրանսիական ակադեմիայի անդամ Մեզեր, Լակրուա, Դավիդ, Տենօ և Սարլա Ֆրանսիական պատգամաւորները։

—«La Gazette des Tribunaux» նկատում է, որ Լուիզա Միշել, որը անաջող միտինգից յետոյ ձեռքից փախաւ, այժմ ազատ է և ոչ ոք չէ մըտածում նրան հալածել։ Ուրիշ լրագիրները պընդում են, որ նա կալանաւորված է։ Առհասարակ հաւատացնում են, որ Լուիզան խելագար անձնաւորութիւն է։

—«Times» լրագիրը, խօսելով Փարիզի մէջ մարտի 9-ին տեղի ունեցած բանտրների միտինգի մասին, ցանկութիւն է յայտնում, որ այդպիսի վրդովմունքները հէնց սկզբից ճնշվեն։

—Մադրիդի լրագիրների տեղեկութիւնների համեմատ վրդովմունքը Սպանիայի մէջ և երկիրը անիշխանականներից հեղհեղ ընդարձակվում է։ Վերջինները նամակներ ուղարկեցին կառավարչական անձանց խերեսի մէջ, սպառնալով թունաւորել ջրհորները։ Անդալուզիայի մէջ հաշուում են 100,000 անդամներ «Սև ձեռքի» ընկերութեան։ Կալանաւորումները շարունակվում են։ Մարտի 20-ին խերեսի գաւառի մէջ 20 մարդ կալանաւորեցին և 38 մարդ Գրնաչուելի մէջ։ Ցանցաւորներից մէկը խոստովանեց, որ նա յանցանք գործեց, երկիւղ կրելով, որ «Սև ձեռքի» ընկերութիւնը նրան կը սպանել տայ։

—«Morgenblad» լրագիրը հաղորդում է, որ մեծամասնութեան առաջարկութիւնը Շվեցիայի և Նորվեգիայի կառավարութեանը պետական դատաստանին ենթարկելու մասին հիմնված է նրա վրա, որ թագաւորը չը հաստատեց ստորտինգի վճիռը պետական խորհուրդի գործերի մասին և որ կառավարութիւնը համաձայնութիւն տուեց ժողովրդի զինաւորմանը։ Պետական խորհրդի այն բոլոր անդամները, որոնք քուէարկեցին ստորտինգի վճիռը չը հաստատելու համար, պէտք է ենթարկվեն դատաստանի։

—Մայրաքաղաքի լրագիրներում արտատպված են նկարագրութիւնները այն անկարգութիւնների, որ կատարվեցան Փարիզում մարտի 9-ին։ Ինվալիդների հրապարակի վրա կազմված բանտրների միտինգը կառավարութիւնից արգելվեցաւ այն հիման վրա, որ օրէնքը թոյլատրում է ժողովներ կազմել միայն ծածկված հիմնարկութիւնների մէջ, և ոչ թէ բաց երկնքի տակ։ Բանտրները աշխատում էին օրէնքի հակառակ գործել և յայտնի սոցիալիստ Լուիզա Միշելի առաջնորդութեամբ ժողովներ էին կազմում, որոնց այնու ամենայնիւ պոլիցիան հնչատութեամբ ցրվեց։ Մօտ 2 ժամին, հրապարակի վրա գումարվեցաւ մօտ 5,000 հոգուց բաղկացած խառնիճաղանճ ամբոխ։ Ամբոխի մէջ աչքի էին ընկնում «Figaro» և «Gaulois» լրագիրների խմբագիր-աշխատակիցները, որոնք խրախուսում էին ամբոխին։ Ինվալիդների տան վանդակապատի մօտ երևեցաւ Լուիզա Միշել բարձր սանդուղքի վրա և բարձր ձայնով ճառ ասեց խումբին։ Յետոյ կռիւ սկսվեցաւ պոլիցիական գործակատարների հետ, որի ժամանակ բանտարկեցին Սէնայի դեպարտամէնտի նախկին պրէֆէկտ կոմս Կէրատրիին։ Յանկարծ աղաղակներ լսվեցան. «Դէպի Ելիսեան պալատը», և բոլոր ամբոխը գնաց դէպի հանրապետութեան նախագահի բնակարանը։ Ամբոխին առաջնորդում էր «Gaulois» լրագրի աշխատակից Կոմվիէ Ֆէլիօն, որ յայտնի է իր սիրահարական խայտառակ քաջագործութիւններով։ Նոյն ժամանակը դէպի Ելիսեան պալատը և պատգամաւորների ժողովը տանող բոլոր փողոցները զօրքերով լցվեցան։ Մեծ աղմուկով ամբոխը կանգնեց արուարձանում, ուր պոլիցիականները սկսեցին քշել նրան, որի ժամանակ կրկին մի քանիսները կալանաւորվեցան, որոնց թւում և Ֆէլիօն։ Ամբոխի մէջ նկատվում էին բօնապարտեան կուսակցութեան պատկանող մի քանի պատգամաւորներ, որոնք բարձրաձայն խրախուսում էին ամբոխին անկարգութիւններ գործելու համար։ Ամբոխի հասնելը Սէնտ-Օնորէ արուարձանում ընդհանուր սարսափ տարածեց։ Ոստիկանապետ Պիտեռ և կօմենդանտ Լաֆս խորհրդակցում էին, թէ ինչ անեն։ Վճռվեցաւ վանել ամբոխը, որ և առանց մեծ դժուարութեան յաջողվեցաւ։ Զէնքին չը դիմեցին, այլ փայտերով և բռունցքներով էին գործում։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շարունակելով իր թիւրքաց անէկդօտները «Моск. Вѣд.» լրագրում, Զայկովսկի, պատմում է ի միջի այլոց յայտնի Հուսէյն-փաշայի արդարադատութեան հետևեալ օրինակի մասին։ Վաղուց Թիւրքիայում մահմեդական կամայականութեան չնորհիւ մտել էր դիշ-քիրասի (ատամի հարկ) անունով հարկ առնելու սովորութիւնը։ Մահմեդականը, անցնելով քրիստոնեաներով բնակեցրած որ և է գիւղի միջով, իրաւունք ունէր պահանջել ամեն տեսակ ուտելեղէններ, որ առատութեամբ և զանազանակերպ բերում էին նրա մօտ, նա գիւղացիների հետ միասին որոշում էր նրանց գինը, ուտում էր որքան կամենում էր, իսկ մնացածի համար հրամայում էր վճարել զուտ փողերով, արած գնահատութեան համեմատ։ Հուսէյն-փաշան, որին բօլդարները սովորաբար անուանում էին Աղա-փաշա, գեներալ-նահանգապետի պաշտօնը ստանալու ժամանակ, արգելեց այդ հարկի ժողովելը։ Երկրի ամենահարուստ բէգերից մէկը, երիտասարդ Բէնէդ-աղան, բօլդարական մի գիւղ գալով, Աղա-փաշայի հրամանի հակառակ, պահանջեց ատամի հարկը։ Աղա-փաշան հրամայեց բանտարկել և վիդդին բերել նրան։ Այստեղ նա հայրական ձևով յանդիմանեց նրան, ապա հրամայեց նստացնել նրան աթոռի վրա, կապել և հրամայեց կանչված վարսավիրին (դալաքին) մէկ մէկ հանել նրա ատամները։ Այդ գործողութիւնը վերջացնելուց յետոյ, նա արձակեց նրան ասելով.—առանց ատամների, իրաւունք այլ ևս չես ունենայ ատամի հարկ առնելու, այդպէս կը վարվեմ ամեն մէկի հետ, ով քեզ պէս կը վարվի։ Այդ միջոցով նա վերջացրեց մշտապէս ատամի հարկ առնելու սովորութիւնը։

* * *

Ֆրանսիական մինիստրները բաւական մեծ ռոճիկ են ստանում, քանի որ պաշտօն ունեն։ Հէնց որ հրաժարական են տալիս, իսկոյն դադարում են ռոճիկ ստանալ։ ԵԹԷ, օրինակ, մինիստրը հրաժարական է տալիս որ և է ամսի 2-ին, ռոճիկը միայն երկու օրվայ համար է տրվում նրան։ Մինիստրները թոշակ չեն ստանում։

* * *

Պատգամաւոր Պէյեր Ֆրանսիական պատգամաւորների ժողովում մի առաջարկութիւն մտցրեց այն ծնողներին վարձատրելու մասին, որոնք զաւակների մի յայտնի թիւ ունեն։ Այդ առաջարկութեան պատճառն այն է, որ ազգաբնակութիւնը 1876-ից մինչև 1881 թիւը աճել է $^{6}/_{10}$ պրօցենտ, այն ինչ Գերմանիայում (չը նայելով սաստիկ դաղթականութեան) ազգաբնակութեան աճումը հասնում է $6^{3}/_{10}$ պրօցենտի։ Ֆրանսիայի բազմաթիւ բժիշկները և ամուսնացածները աշխատում էին վճռել այն հարցը, թէ ինչով կարելի է բացատրել այդ երևոյթը։ Ֆրանսիական գիւղացին չէ սիրում շատ զաւակներ ունենալ, որովհետև նա բաժանում է իր կայքը հաւասարապէս զաւակների մէջ, իսկ բուրժուան վախենում է մեծ ծախսերից, որ անհրաժեշտ է անել երեխաների կրթութեան համար։ Ֆրանսիական բարձր շրջաններում երիտասարդութիւնը այնպէս սովորած է քէֆեր և ուրախութիւններ անելուն, որ խուսափում է պսակվելուց և վստահանում է պսակվել միայն այն ժամանակ, երբ դատարկել է արդէն զուարճութեան բաժակը։ Նոյնմանատեսակ երևոյթի վրա մատնացոյց է անում Ցացիտ իր պատմութեան մէջ։ Ամեն միջոցներ այն ժամանակ ապարդիւն անցան։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մարտի։ 1882 թուականի ընթացքում արանգիտով ուղարկված են զանազան օտար ապրանքներ 16,626,765 ր. գումարի, 1881 թուականից 7,772,103 ր. աւելի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մարտի։ „Journal de St. Petersbourg" նկատում է. Ռուսաստանը Դունայի կօնֆերենցիայի ժամանակ հասաւ այն բանին, ինչ որ ցանկանում էր։ Փարիզի դաշնագրի վերջին հետքերից մէկն էլ անհետացաւ։ Այսուհետև Ռուսաստանը կարող է ազատ օգտվել Կիլիեան թեւի արտօնութիւններից այն պայմանով, որ չը նեղի Սուլիեան թեւից օգտվող պետութիւններին, թեպէտ այդ պայմանն էլ չէ արդելում օրինաւոր մրցումն։ Այսօր բացվում է երկաթուղիական ընդհանուր ժողով։

ՍԱՄԱՐԱ, 10 մարտի։ Օրենբուրգի երկաթուղու շարժական մասը ընդարձակված է. այժմ բոլոր կայարանների վրա հաց մնացել է ընդամենը 250 վագոն։ Բեռը թրջվելուց ապահով է, որովհետև ծածկված է բրեզենեներով։

ՓԱՐԻԶ, 10 մարտի։ Թագադրութեան ժամանակ Ֆրանսիական կառավարութեան կողմից ներկայացուցիչ կը լինի Վադդինգտոն, իսկ հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ գեներալ Պիտիէ։

ՎԻԵՆՆԱ, 10 մարտի։ Սոցիալիստների դատը, որոնք գողութեամբ և կողոպտելով միջոցներ էին գտնում իրանց վարդապետութիւնը քարոզելու համար, վերջացաւ երէկ հետևեալ դատավճռով. երկու մեղադրվածներին ենթարկել կալանաւորման 15 տարով, իսկ մէկին երկու տարով։ Մնացածները արդարացրած են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մարտի։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ $24^{1}/_{8}$ պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ $204^{1}/_{4}$ մարկ, Փարիզի վրա 252 ֆրանկ։ Ոսկի արժէ 8 ռուբլ 23 կոպ., մաքսային կուպօններ 8 ր. 21 կ., արծաթ 1 ր. 35 կ.։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ 92 ր., չորրորդ 92 ր., հինգերորդ 92 ր.։ Ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ $219^{1}/_{2}$ ր., երկրորդ $211^{1}/_{2}$ ռուբլ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

ՄՕՍԿՎԱ, 11 մարտի։ Նիկոլայեվսկայա, Եարօսլավսկայա, Մոսկովեան-Կուրսկայա և Բրէստսկայա երկաթուղիները, մարտի 8-ից սկսած, վերականգնեցին բեռների տեղափոխութիւնը։

ՏԱՄԲՕՎ, 11 մարտի։ Հացի առևտուրը անշարժ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մարտի։ Լուր կայ որ Կովկասեան փոխարքայութիւնը վերականգնվում է և որ փոխարքայ կը նշանակվի Կայսերական Ընտանիքի մի անդամ։ Կանանց կուրսերի մէջ աւարտողներին, փոխանակ գիմնազիական մանկաբարձուհիների տիտղոսի, կը յատկացվի կանանց և երեխաների բժիշկների տիտղոս։ „Новое Время" լրագիրը հաղորդում է որ նշանակվում է կառավարչական քննութիւն „նաւագնացութեան և առևտրի" ռուսաց ընկերութեան վրա։ Կամաւոր նաւատորմը կենթարկվի ծովային մինիստրութեան իշխանութեանը։ Ակացին թղթերի զողութեան համար Ս. Պետերբուրգի գանձարանից, դատապարտված են. Վավիլով աքսորի Արխանգելեան նահանգը, իսկ մնացածները բանտարկութեանը կալանաւորների տան մէջ, երկու ամսից մինչև վեց ամիս ժամանակով։

ՀՌՕՄ, 11 մարտի։ Իտալիայի ներկայացուցիչը թագադրութեան ժամանակ լինելու է իշխան Ամէդէյ։

ԲԱԳՈՒ, 11 մարտի։ Նաւթի ֆօնտանների թիւը անդադար աւելանում է, բայց նաւթը չէ ծախվում։ Նրա պուդի գինը 2 կոպէկից պակաս է։ Նաւթի ուղարկելը Սև ծովով անհնարին է, քանի որ երկաթուղին ոչինչ յարմարութիւն չէ տալիս այդ նիւթի տեղափոխութեան համար։ Դրութիւնը կրիտիկական է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ

Յայտնել յարգելի հասարակութեանը, որ իմ ալիւրի խանութի մէջ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՈՒՄ, Դվօրցովայա փողոցի վրա № 138 ՆԵՐՔԻՆ ՅԱՐԿԻ մէջ, Դավիդովի մահուդէ խանութի հանդէպ մանր և մեծ քանակութեամբ ծախվում է ամենաբարձր տեսակի ԿՐՈՒՊՊԱ ԵՒ ԿՐՈՒՊՊԱՅԱՏԿԱ 1 և 2 տեսակի և ՎԱԼՑՕՎԻ ԱԼԻՒՐ ՋՈՒՐԵԼԻՆ և ընկ. գործարանից Բօստով Դօնի վրա ԱՄԵՆԱՋԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։ Օրինակ ալիւրը ֆունտերով ես ծախում եմ այն գնով, ինչ գնով ուրիշները ջուալներով են ծախում։

**ԱՐՇԱԿ ՏՈՒԼԱԵՎ**

4—4 (1)

---

ВЪ РЕДАКЦІИ
ГАЗЕТЫ „МШАКЪ"
ПРОДАЕТСЯ БРОШЮРА
НА РУССКОМЪ ЯЗЫКѢ
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."
Цѣна 25 копѣекъ.
Соч. Григорія Ѣ р ц у н и.

---

### ԾԱԽՎՈՒՄ Է

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

**ԾԱՂԿՈՒՆՔ**

(Թարգմանականք. Ա. Մ. Ե. Պ.)

Ազնիւ Թղթի վրա դեղեցկատիպ։

ԳԻՆԸ 25 կ.։

---

### ԴՐ Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ կը լինի ԿԻՐԱԿԻ օր, մարտի 13-ին, առաւօտեան ժամը 12-ին,

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ։

ՏՈՄՍԱԿՆԵՐԸ վաղօրօք ծախվում են ԹԱՏՐՕՆԻ ԿԱՍՍԱՅՈՒՄ։

3—3

---

ՐԱՖՖԻ

## ԿԱՅԾԵՐ

### ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ

Գիրքը բաղկացած է 546 երեսներից և աւելի մեծ գիրք ունի, քան թէ հեղինակի միւս հրատարակութիւնները։

Թիֆլիսում վաճառվում է

„Մշակի" խմբագրատանը.—„կենտրոնական գրավաճառանոցում"—„Կովկասեան գրավաճառանոցում"—պ. Շահվերդեանի պավիլիօնում—պ. պ. Շահինեանցի և Ցէր-Յովսէփեանցի ծխախոտի մագազիններում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ. Редакція "Мшакъ". А. МЕЛИКЪ-АКОПІАНУ.

---

## INJECTION AU MATICO

De GRIMAULT & Cᵉ, PHARMACIENS A PARIS

PERMIS EN RUSSIE

Փարիզի Գռիմօ և ընկերք դեղավաճառաց

ՄԱԹԻՔՕԻ ԷՆԺԷՔՍԻՕՆԸ

Ռուսաստանում ընդունված.

Այս դեղը որ Փէրուի Մաթիքօ կոչուած զուտ բոյսէն բաղադրեալ է, քիչ աւուր մէջ ամենից շատ հնացած հոսումները կը բժշկէ, և այդ պատճառաւ մի քանի տարուան մէջ ամբողջ աշխարհում հռչակուած է.

Ծախվում է Փարիզ, Վիվիէն փողոց, № 8 և գլխաւոր դեղավաճառաց մօտ. Т

---

Թիֆլիսում դեղատան ապրանքների կովկ. ընկ. մէջ և Շահ-Պարոնեանցի մօտ։

(5. 12. 23) 5—9

---

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի խնդրել յարգելի անդամներին շնորհ բերել ներկայ գտնուելու Ընդհանուր ժողովին, որ լինելու է ամսոյս 13-ին Կիւրակի, առաւօտեան 11 ժամին, Սբ. Գայեանեան Հայ օրիորդաց միջնակարգ Ուսումնարանի դահլիճում։

Պարապմանց նիւթերն են՝ 1882 հաշուետուութիւնը և 1883 թ. նախահաշուի (բիւջէի) քննութիւնը։

1—2

---

**ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ** ներկայ ամսվայ 12-ին աճուրդ նշանակելով. 1) 25 սայլերի համար, որոնք շինութեան նիւթեր պէտք է տեղափոխեն քաղաքի զանազան մասերը և 2) քաղաքի փողոցներից և հրապարակներից ցեխ և աղբ դուրս տանելու համար, հրաւիրում է աճուրդին մասնակցել ցանկացողներին գալ վարչութեան բնակարանը նշանակված ժամանակին առաւօտեան 12 ժամին։ Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 6 ժամից մինչև 2-ը։ 3—3

---

## PHOSPHATE DE FER

De LERAS, Docteur ès-sciences.

Դիտութեանց տոքթօր և դեղագործ

Լըսայի

### ՖՕՍՖԱԹ ՏԸ ՖԷՌԸ

Այս դեղը արիւնը և ոսկրները վերանորոգելու և զօրացնելու համար գործածուած դեղերից ամենաազդուն է։ Ոչ մինդութիւն կը պատճառէ, ոչ ստամքոյը կը հոգնեցնէ և ոչ ալ ակռաները կը սևացնէ, միշտ մեծ յաջողութեամբ բժշկում է կանանց ապիտակ հոսումը, ստամքոյի ցաւը, ժժգունութիւնը, արեան սակաւութիւնը, միով բանիւ այն ամէն հիւանդութիւնները, որոց ենթակայ են փափուկ կանայք և դեռատիպ աղջկունք և մանկունք, որը ժժգոյն, անարիւն, թուլամարթ և անախորժ են։

Ծախվում է Փարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառաց մօտ. Т

---

Թիֆլիսում Դեղատան ապրանքների վաճառման բարձրագոյն հաստատված կովկասեան Ընկեր. մէջ և Շահ-Պարոնեանցի մօտ։

(5. 12) 4—6

---

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

## ՊԱԼԵՍՏԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՁԵՌՆԱՐԿ իբրև օժանդակ սուրբ պատմութեան։

Գրքի վերջը գտանվում է համառօտ ծանօթութիւն սուրբ պատմութեան մէջ յիշված բոլոր երկրների։

ԳԻՆՆ Է **20** ԿՈՊԷԿ

Գումարով կանխիկ առնողներին կը լինի 10—20% զիջումն։

Իմ միւս աշխատասիրութիւնները՝ 1) „Աշխարհագրութիւն Հայաստանի", 2) „Հայրենագիտութիւն", 3) „Քարտէզ Հայաստանի", գտնվում են կովկասեան և կենդրօնական գրավաճառանոցներում։

ԱՒԵՏԻՔ ՏԷՐ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ.

---

ՓԱՐԻԶԻ ԱՊՐԱՆՔ

Պատիւ ունիմ յայտնելու յարգելի հասարակութեան որ նորերումս ստացայ ՓԱՐԻԶԻՑ ամենայն տեսակ, ամենաընտիր ԱՄԱՐԱՅԻՆ ՄԱՀՈՒԴՆԵՐ և ՏՐԻԿՈՆԵՐ։ Պատուէրները վերցվում են չափաւոր գնով և կատարվում են ՓԱՐԻԶԻ ՎԻՆ ՄՕԴԱՅՈՎ ամենաճշգրտ կերպով։ Խանութս գտանվում է Սօլօլակի, Գանդակայեա փողոց, տուն Շահնազարովի։

ԴԵՐՁԱԿ Ա. ՏԷՐ-ՅԱԿՕԲՕՎ.

1—5

---

ԳԱԼԵՐԷԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՑՕՎԱՅԱ ՓՈՂՈՑ

ՊԱՀԵՍՏ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիէննայի ԹՕՆԷԹ ֆաբրիկայի ՄԷԲԷԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, Բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմայլով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

---

## Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 բուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոգանները 2 ր. 75 կ. և 26 ր., սակաւյաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սուփրաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուրթներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., առաւելագոյն հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մեսալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի դգալներ 4 ր. 50 կ. և թանգ թէյի գդալներ ֆրաժէի, մելխիորի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղներ 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պղպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրօններ բէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 Ֆ. ԹԷՑ Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԴԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օղը կոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամբի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօսաի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։ Վերի յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։ Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

2—100

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Марта 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.